ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/11» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 04.03.2024թ.
Ժամը 14[30]

Հանձնաժողովն արձանագրեց հայտերի բացման փաստը և որոշեց նիստը շարունակել մասնակցի կողմից ներկայացված հայտն ուսումնասիրելուց հետո:

04.03.2024թ., ժամը 14:30-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու(ԳԱՊ)՝

ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԶԲՖԿԾ պետ Ա. Պապյանը,

Գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԿԾԲ պետ Ա. Աֆյանը,

ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԿԾԲ գլխավոր մասնագետ Թ. Ստեփանյանը,

Գնումները համակարգող

ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության ԳԿ 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ Լ. Թազայանը:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/11» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Լ. Թազայան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/11» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/11» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Լ. Թազայան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Էլեկտրական սարքավորումների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/11» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/h	Մասնակցի անվանումը
1.	«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/11» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

(Լ. Թազայան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակցի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/11» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Լ. Թազայան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/Հ	Գնան առարկայի անվանումը	Չ/մ	Քանակ	գնման գին ՀՀ դրամ	Ընթացակարգին մասնակցող ընկերությունների				
					Հ/հ	անվանումները	Գնային առաջարկ /ՀՀ դրամ/		
							Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	Ջրի պոմպեր (ԷՑՎ-4, 1.5կվ-4/2.5/10)	հատ	1	245,000					Գնային առաջարկի բացակայություն
2	Էլեկտրաէներգիայի հոսանքափոխարկիչ (Տրանսֆորմատոր TC-1.6 կվա (380/36))	հատ	20	1,600,000					Գնային առաջարկի բացակայություն
3	Կենցաղային սառնարաններ	հատ	40	7,400,000	1	«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ	4,666,000	933,200	5,599,200

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են):

3.3 Ըստ ներկայացված տվյալների՝ մասնակիցն ԱԱՀ վճարող է:

3.4 Գների նվազեցման նպատակով բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/11» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Լ. Թազայան)

4.1 04.03.2024թ.-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, Armeps (www.armeps.am) համակարգում էլեկտրոնային գնահատման արդյունքում, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկի հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/11» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/11» ծածկագրով ընթացակարգը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջները՝ (ոչ մի հայտ չի ներկայացվել):

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/11» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները:

4.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/11» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.5 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/11» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Սույն ընթացակարգի շրջանակներում անգործության ժամկետ չի կիրառվել, քանի որ հրավերի պահանջներին համապատասխան գնահատված հայտ ներկայացրած մասնակիցը միակն էր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Լ. Թազայան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ.

(Լ. Թազայան)

6.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/11» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Պապյան
Գնահատող	Ա. Աֆյան
Գնահատող	Թ. Ստեփանյան
Գնումները համակարգող	Լ. Թազայան